ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝ **EDU ARMENIA**

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Համագործակցային ուսուցման մեթոդների կիրառմամբ բանավոր խոսքի զարգացումը տարրական դասարաններում

ԱՆՑԱԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Գավառ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ժենյա Միրիբյան

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Խաչատուր Հայրապետյան

ԴՊՐՈՑ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի թիվ 7 միջնակարգ դպրոց

Գավառ- **2023**

Բովանդակություն

1.Ներածություն.....3
2.Գրական ակնարկ.....6
3.Փորձարարական հետազոտություն
3.1.Խմբի նկարագիրը..... 11
3.2.Փորձարարական դասեր
3.2.1.Փորձարարական դաս-1.....13
3.3.2.Փորձարարական դաս-2.....15
4.Եզրակացություն.....17
5.Գրականության ցանկ.....18
6.Հավելված
1.Դասապլան1.....19
2.Դասապլան 2.....25

Ներածություն

Անձի զարգացման և ձևավորման մեջ կարևոր նշանակություն ունի խոսքի և հաղորդակցության զարգացումը: Լեզվական հաղորդակցումն ու փոխազդեցությունը իր դրական ազդեցությունն է ունենում երեխայի խոսքի զարգացման վրա:

Մեր օրերում առավել քան արդիական է բանավոր խոսքի զարգացման միջոցների ուսումնասիրությունը, քանի որ 21 –րդ դարում, առավել քան կարևորվում է անգլերեն լեզվի ակտիվ՝ տեսական և գործնական իմացությունը:

Հետազոտական աշխատանքում դիտարկվում են արդի դասավանդման մեթոդների կիրառմամբ օտար լեզվի բառապաշարի և քերականական ժամանակաձևերի

մատուցման արդյունավետ միջոցներն ու սկզբունքները, ինչպես նաև

ներկայացվող մեթոդների բովանդակությունը, առանձնահատկությունները, դասավանդման քայլերի հաջորդականությունը, դասաժամի արդյունավետ օգտագործումը, նյութի ճիշտ բաշխումը ժամանակի մեջ և այլ մեթոդական նրբություններ: Որոշ մեթոդներ միտված են զարգացնելու լեզվի ուսուցման բոլոր հմտությունները՝ լսել, խոսել, գրել, կարդալ, իսկ մյուսները շեշտը դնում են կոնկրետ հմտությունների վրա:Մեթոդի ընտրության հարցում կարևոր է նաև հաշվի առնել, արդյոք դասընթացն անհատական է, թե՝ խմբակային:

Հետազոտության նպատակը աշակերտի խոսքային հաղորդակցման ունակությունների ձևավորման ու բանավոր խոսքի զարգացման հնարավորությունների բացահայտումն է ուսուցման գործընթացում:

Հետազոտության խնդիրը աշակերտի մոտ արտահայտվելու, համագործակցելու կարողություն և բանավոր խոսքի հարուստ մշակույթ ձևավորելու նպատակով մեթոդական շղթայի ուսումնասիրությունն է :

Այսօր անհրաժեշտություն է նորովի մոտենալ այս հիմնախնդրին, հին և նորագույն մեթոդների ու միջոցների համադրությամբ հասնել ցանկալի արդյունքի:

Լեզվի դասավանդման պատմության ընթացքում դասավանդողները կիրառել են տարբեր մեթոդներ, պարբերաբար անցում կատարել նորագույն մեթոդների, իսկ ժամանակն ու նոր սերունդների պահանջները հղկել են բառապաշարի և լեզվական կանոնների մատուցման ձևերը՝ դրանք զուգադրելով ժամանակակից տեխնիկայի և սարքավորումների առաջարկած հնարավորությունների հետ: Նորովի մատուցելու և դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու ձգտումը լեզուն ուսուցանողներին դրդել է նոր սկզբունքներ և մարտավարություններ մշակել, որոնցից հաջողվածները լայն տարածում և կիրառություն են գտել, լրացվել, վերամշակվել և վերածվել մեթոդների:

Անգլերեն լեզուն, որպես ուսումնական առարկա, նպաստում է սովորողների ընդհանուր կրթությանը, զարգացնում նրանց ճանաչողական կարողությունները, խոսքն ու մտածողությունը: Սովորելով անգլերեն լեզուն՝ կրտսեր դպրոցական տարիքի երեխան նախնական պատկերացումներ է ձեռք բերում տվյալ լեզվի մասին, ըմբռնում որոշ առանձնահատկություններ, որոնցով այն տարբերվում կամ ասոցացվում է մայրենի լեզվի հետ, ինչը նպաստում է սովորողների ինչպես բանասիրական մտահորիզոնի ընդլայնմանը, այնպես էլ մայրենի լեզուն հիմք ունենալով, ավելի լավ հասկանալու ուսումնասիրվող օտար լեզուն:

Լեզվի ձեռքբերումն ու լեզվի սովորումը փոխկապակցված գործընթացներ են՝ լեզուն սովորողը ուսուցումը սկսում է լեզվական կանոնների և բառապաշարի յուրացումից, դրանք դնում գործածության մեջ և բանավոր և գրավոր տեսքով՝ որոշակի արդյունքի հասնելու համար: Միայն դասավանդողի հետևողականության և սովորողի ջանասիրության դեպքում են լավագույն արդյունքներ գրանցվում: Անշուշտ, չի կարելի հերքել դարերով եկած այն կարծրատիպը, որ նոր լեզու սովորող յուրաքանչյուր անձ բառապաշարի և լեզվական կանոնների մատուցման անհատական մոտեցում է պահանջում, ուստի չի կարող մեկ անձի դեպքում հաջողություն արձանագրած մարտավարությունը համարվել բացարձակ արդյունավետ: Բացի այդ, կարևորվում են նաև լեզվական ուսուցման նպատակը, ժամկետները, սովորողի ընդունակությունները և այլն: Սա է պատճառը, որ մանկավարժության մեջ ուսուցման մարտավարությունները արդյունավետ դասավանդման մեթոդները բազմաթիվ են:

Հայ աշակերտների համար առանձնահատուկ դժվարություն է ներկայացնում անգլերեն լեզվով բանավոր հաղորդակցվելը (լսելը և հատկապես խոսելը): Պատճառները կարող են բազմաթիվ լինել: Բանավոր խոսքը պահանջում է ավելի շատ հմտություններ և գիտելիքներ քան պարզապես բերականորեն ճիշտ նախադասություններ կազմելը: Մի շարք պատճառներով օտար լեզվով խոսելն ավելի դժվար է քան գրելը : Որպեսզի աշակերտները կարողանան հաղթահարել այդ դժվարությունները և ձեռք բերեն հաղորդակցական հմտություններ, անհրաժեշտ է, որ ուսուցիչները հետևեն որոշակի սկզբունքների և ստեղծեն իրական կյանքին մոտ իրավիճակներ՝ բանավոր հաղորդակցությունը խթանելու համար: :

Աշակերտների բանավոր խոսքի ունակությունները հաջողությամբ ձևավորելու և զարգացնելու համար, բազմաթիվ մեթոդների ու հնարների մեջ իր ուրույն տեղն ունի Համագործակցային ուսուցումը:

Գրական ակնարկ

Համագործակցային ուսուցումը, ինտերակտիվ մեթոդի մի առանձին տարատեսակ է, որն իր որոշակի առանձնահատկությունների շնորհիվ, ի սկզբանե առանձնացել և ստացել է համագործակցային ուսուցում անունը:

«Իմ խորին համոզմամբ, ապագան համագործակցային գաղափարախոսությանն ու համագործակցային ապրելակերպինն է», նշում է ուսուցման կոլեկտիվ եղանակի հայտնի գաղափարախոս Մ. Մկրտչյանը:

Համագործակցային ուսուցումը մեթոդ չէ, այն ուսուցման եղանակ է, ինչպես դաս-դասարանային համակարգը, կոլեկտիվ ուսուցման համակարգը և այլն: Սա ուսուցման այն եղանակն է, որը ի սկզբանե կոչված է վերացնելու բոլորին միաժա-մանակ սովորոցնելու առումով ավանդական ուսուցման հիմնական թերությունը: Կարճ ասած, շատ դժվար է և, մեծամասամբ, անհնարին, որ ուսուցիչը կարողանա 30-35 հոգանոց դասարանին միաժամանակ ընդգրկել ակտիվ ուսուցման գործընթացում:

Համագործակցային ուսուցումը համատեղ սովորելու եղանակ է, երբ խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ներգրավված են ակտիվորեն, և գիտելիքը մշակվում ու հարմարեցվում է վերափոխման միջոցով: Համագործակցային ուսուցումը դա սովորելն է հաղորդակցվելու, խոսելու միջոցով, երբ մեկը մյուսին օգնում են ըմբռնելու նյութը:

Համագործակցային ուսուցման մեջ էական են ոչ միայն ակադեմիական գիտելիքներ և հմտություններ ունենալը, այլև կարևոր են, որ խմբային զարգացման (մշակման) միջոցով դառնալ հմուտ համագործակցողներ (համագործակցային հմտություններ) և գիտելիների ակտիվ կիրառողներ (մտածողության հմտություններ): Համագործակցային ուսուցումը մեծացնում է նաև սովորողների ինքնուրույնությունը և պատասխանատվությունը (ինքնահանաչման և ինքնուղղորդման հմտություններ):

Համագործակցային ուսուցման իմաստն է՝ յուրաքանչյուր անհատի դարձնել ուժեղ անձնավորություն ժանամանակակից հասարակության մեջ:

Համագործակցային ուսուցման իմաստը յուրաքանչյուր անհատի՝ խմբի ակտիվ և համագործակցելուն պատրաստ անդամ դարձնելն է:

Համաձայն հետազոտությունների՝ համագործակցային ուսուցումը ուժեղաց-նում է՝

✔ Համագործակցային հմտությունները (<u>թիմային աշխատանք, սոցիալա-կան հմտություններ</u>),

✔ Տեղեկատվության մշակման հմտությունները (<u>մտածողության հմտու-թյուններ</u>),

✔ Բազմազանության (<u>բազմակարծության</u>) ըմբռնումն ու ընդունումը,

✔ Անհատականությունը՝ ինքնավստահությունը և ակտիվ քաղաքա- ցիությունը,

✔ Ստեղծագործական կարողությունները և գործնականությունը:

Վերը նշված հմտությունները և ակադեմիական բովանդակությունը (<u>առարկան և թեմաները</u>) սովորելու միջոցներ են:

Համագործակցային ուսուցումը առավել արդյունավետ է միայն այն դեպքում, եթե այն իրապես համագործակցային է և ոչ թե պարզապես ավանդական խմբային աշխատանք կամ միայն ինտերակտիվ (փոխներգործուն) վարժություն:

Համագործակցային ուսուցման մեթոդներն են.

1. Խճանկար,
2. Դասախոսություն,
3. Բանավեճ,
4. Դերային խաղ,
5. Զբոսանք պատկերասրահում,
6. Խմբային հետազոտություն,
7. Երբեք կողպեք մեկ բանալի,
8. Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ և այլն:

Այս մեթոդներից յուրաքանչյուրի հիմքում ընկած է խմբային ուսուցումը՝ աշխատանք խմբերով: Խումբը կարող է ունենալ 2,3,4 կամ 5 անդամ:

Այն դեպքում երբ խմբի անդամների թիվը նվազագույն՝ 2-ն է, ստանում ենք ուսուցման կազմակերպման զույգային ձևը՝ հաստատուն կազմով համագործակցային հաղորդակցություն կամ ուսուցման կազմակերպման կոլեկտիվ ձև՝ հաղորդակցություն ուսուցիչ-աշակերտ կամ աշակերտ-աշակերտ փոփոխական կազմով զույգերում: Ընդ որում՝ յուրաքանչյուր սովորող հերթով հաղորդակցվում է մյուսների

հետ, և արդյունքը լինում է այն, որ բոլորը հաղորդակցվում են բոլորի հետ Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է, այն ենթանդրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ: Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը:

Համագործակցային ուսուցման տարրերը հետևյալն են՝

- դրական փոխկախվածություն.

  Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջացելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումները ու ձգտումները օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:

- դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն.

  Խմբի անդամները համագործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:

- անհատական հաշվետվություն և պատասխանատվություն.

  Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը:

- սոցիալական հմտություններ.

- Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդում ունենալը:

- խմբային գործընթաց.

- Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է: Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների մասնակցության հետադարձ կապը:

Համագործակցային մեթոդները մեծ ներուժ ունեն աշակերտակենտրոն ուսուցում կազմակերպելու համար, ինչը ևս կրթական բարեփոխումների կարևոր պահանջներից է: Համագործակցային մեթոդները թույլ են տալիս առավել արդյունավետ յուրացնել նոր նյութը, զարգացնել ինքնուրույնության, համագործակցային, հետազոտական աշխատանք կատարելու բազում հմտություններ, օրինակ՝ տեղեկության որոնման, հավաքման,

մշակման և այլն: Մեթոդի կիրառումը հնարավորություն է տալիս տեքստի ընկալման, վերլուծության, գլխավորը երկրորդականից տարբերելու, սեփական կարծիքը հիմնավորելու, ընդհանրացման, այն համագործակցային հմտությունների զարգացման արդյունավետ ձև է: Բնականաբար առաջին անգամ մեթոդը կիրառելիս չեն կարող թերություններ չլինել, ուստի որոշակի հաջողություն գրանցելուց հետո մեթոդի կիրառումը և աշակերտների կողմից այն օգտագործելու արյունավետությունը բարձրացնելու համար ցանկալի է և օգտակար՝ դրա բազմակի կիրառությունը:

Աշակերտների թիմային առաջադիմություն

Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից:

Այն համարվում է առավել հեշտ կիրառվող մեթոդներից մեկը և առանձնապես օգտակար է համագործակցային ուսուցման այս մեթոդը կիրառել տարրական դասարաններում: Այն խթանում է սովորողների համագործակցությունը և մասնակցությունը: Մեթոդի կիրառության շրջանակներում կիրառվում է գնահատման այնպիսի համակարգ, որի պարագայում աշակերտը շահագրգռված է ոչ միայն իր, այլև խմբի բոլոր անդամների ուսումնառությամբ:

Ընթացքի նկարագրություն:

Նոր թեման բացատրելուց հետո դասարանը բաժանել 4-5 հոգանոց տարասեռ խմբերի. յուրաքանչյուր խմբում ընդգրկելով գերազանց, միջին և ցածր առաջադիմությամբ աշակերտների, ապահովելով նաև տղա-աղջիկ հավասարությունը / հնարավորության դեպքում/:

Խմբերին տրվում է նոր թեմային առնչվող հանձնարարություն՝ նշելով, որ հանձնարարության կատարումը համարվում է ավարտված, երբ խմբի յուրաքանչյուր անդամ յուրացրել է նյութը: Ապա ստուգվում է նյութի յուրացման աստիճանը: Այս ընթացքում, սակայն, թիմի անդամներն արդեն չեն կարող օգնել միմյանց. յուրաքանչյուրն ինքնուրույն է կատարում առաջադրանքը: Առաջադրանքի կատարման ստուգման համար կիրառվող գնահատման համակարգն այնպիսին է, որ յուրաքանչյուր աշակերտ իր գնահատականով իր ներդրումն է անում խմբի ընդհանուր ցուցանիշում: Ստորև ներկայացնենք գնահատման մի նմուշ:

Ա խմբի ցուցանիշները ըստ *100* միավորանոց համակարգի

Աշակերտ	Բազային՝ նախորդ ստուգման ցուցա-նիշը	Նոր ցուցանիշը	Թիմի միավորները
Գևորգյան Ա.	57	64	7
Սարգսյան Լ.	63	55	0
Արամյան Ս.	40	55	10
Պետրոսյան Ռ.	83	88	5
Մարգարյան Ս.	95	100	10
Ընդամենը			32

Աղյուսակից բխում է, որ գնահատման հիմնական ցուցանիշն աշակերտի նախորդ ցուցանիշի համեմատ ցուցաբերած փոփոխության չափն է: Եթե նախորդ ցուցանիշն ավելի բարձր է, ապա աշակերտը 0 է ստանում, քանի որ աճ չի արձանագրվել: Եթե աշակերտը մինչև 10 բալ ավել է վաստակել, քան իր նախորդ ցուցանիշը, ապա նա թիմին բերում է համապատասխան միավոր: Օրինակ, աշակերտ Ա. Գևորգյանը 7 բալով բարելավել է իր ցուցանիշը և թիմին բերել 7 միավոր: Նույն սկզբունքով 5 միավոր է վաստակել աշակերտ Ռ. Պետրոսյանը: Եթե աշակերտը 10 և ավելի բալով է (օրինակ՝ Ս. Արամյանը) բարելավել իր ցուցանիշը, ապա նա թիմին բերում է 10 միավոր, քանի որ մեր օրինակում 10 միավորը առավելագույնն է: Աշակերտը 10 միավոր է վաստակում նաև այն դեպքում, երբ առավելագույն ցուցանիշի է հասնում: Օրինակ՝ Ս. Մարգարյանը թեև ընդամենը 5 միավոր է ավել հավաքել իր նախորդ ցուցանիշից, այնուամենայնիվ նա վաստակել է 10 միավոր, քանի որ առավելագույն՝ 100 բալ է հավաքել: Ի դեպ գնահատման միավորների սանդղակի ընտրությունը ուսուցչի հայեցողության տակ է:

Համագործակցային ուսուցման այս մեթոդը խթանում է աշակերտների ուսում-նառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է սովորողների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ սովորողների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են որոշակի ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին և բարձր առաջա-դիմություն ունեցող աշակերտները պետք է մի կողմից օգնեն՝աջակցեն իրենց դասընկերներին բարելավելու իրենց ցուցանիշները, մյուս կողմից, կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այսպիսով՝ խմբի յուրա-քանչյուր աշակերտ ունի սովորելու և դասընկերներին օգնելու խթան:

Փորձարարական հետազոտություն

1.Խմբի նկարագիրը՝

Սովորողների մեջ ինքնուրույն գործունեության կազմակերպմամբ բանավոր խոսքի զարգացումը Անգլերեն առարկայի դասավանդման ընթացքում՝ համագործակցային մեթոդի կիրառմամբ նախագծված հետազոտական աշխատանքը իրագործելու նպատակով, որպես փորձարարական դասարան ընտրել եմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկի տարրական դպրոցի 4-րդ դասարանը՝

- ✔ հետազոտվող դասարանում աշակերտներների թիվն 13-ն էր՝ 5 աղջիկ, 8 տղա:
- ✔ աշակերտներն ունեին առաջադիմության ու զարգացման մոտավորապես միևնույն մակարդակը, բացի երեք աշակերտից, որոնք էլ գտնվում էին ուշադրության կենտրոնում, ուսման առաջադիմության բարձրացման և ներգրավվածության նպատակով:
- ✔ հետազոտելի դասարանում ուսուցումն իրականացրել եմ Համագործակցային մեթոդի՝ Աշակերտների թիմային առաջադիմություն մեթոդի կիրառմամբ:

Հետազոտության շրջանակներում փորձարարական դասարանում ընտրվել են՝

- ✔ Անգլերենի դասագրքի երկու թեմաներ: Գիտափորձի իրականացման համար կիրառման մեջ են դրվել իմ կողմից նախապես մշակված դասերի պլանները,
- ✔ հետազոտության համար հիմք է ընդունվել « Հանրակրթության պետական չափորոշիչը,
- ✔ հետազոտվող դասարաններում մանկավարժական հետազոտության արդյունքները չափվել են իմ կողմից մշակված հարցաշար-քարտերի վերլուծության հիման վրա:

Դպրոցի հետազոտելի 4-րդ դասարանում, որտեղ նպատակ եմ հետապնդում զարգացնել սովորողների բանավոր խոսքը, աշխատելու եմ Անգլերեն առարկայի դասավանդման ընթացքում համագործակցային մեթոդի կիրառմամբ, որպես ռազմավարական գործիք: Այս մեթոդը ուղղված է սովորողների ինչպես մտավոր ու զգայական կարողությունների, այնպես էլ ինքնուրույնության, սոցիալականացման , անգլերեն լեզվով բանավոր և գրավոր խոսքի զարգացմանը: Դասի կազմակերպման ժամանակ ուսուցչի հիմնական աշխատանքը կլինի բոլոր խմբերի աշխատանքների վերահսկումն ու ուղղորդումը: Յուրաքանչյուր մեթոդի կիրառման նպատակները խիստ բազմազան են, ինչը ենթադրում է նաև, նպատակից կախված, մեթոդի ձևափոխման հնարավորություն: Ցանկացած դաս և դասարան եզակի է, ուստի ուսուցչի վարպետության ցուցանիշներից մեկը նպատակին համապատասխան մեթոդի ընտրությունն է : Իմաստի ընկալման փուլում կիրառելի է «Աշակերտների թիմային առաջադիմություն», «Էվրիստիկ զրույց», «Մտքերի քարտեզագրում», «Մտագրոհ» մեթոդները: Մեթոդի ճիշտ և տեղին կիրառումը հնարավորություն է տալիս սովորողին նյութի,

տեղեկատվության ընկալման, վերլուծության, ընդհանրացման, գլխավորը երկրորդականից տարբերելու, սեփական կարծիքը արտահայտելու և հիմնավորելու, եզրահանգում անելու ունակության ձևավորմանն ու զարգացմանը : Հետազոտության ընթացքում հատուկ ուշադրության կենտրոնում եմ պահելու երեք աշակերտի, որոնք իմ կարծիքով ավելի կաշկանդված են և դժվարությամբ են մասնակցում դասերին: Նպատակն է նաև փորձարարական դասերի արդյունքում ակտիվացնել այս աշակերտներին , որպեսզի դասերին ավելի ակտիվորեն մասնակցեն:

2.Փորձարարական դաս-1

Այսօրվա դասն էր << **Simple Future Tense** >> թեման (տե՛ս դասապլան-1 էջ՝ 16): Դասաժամն սկսվեց հաճախումների և տնային աշխատանքի ստուգումով. բոլորը ներկայացրեցին իրենց տնային աշխատանքները՝ որոշակի թերություններով: Քննարկվեց տնային աշխատանքի սխալները , տրվեց բանավոր և գրավոր հետադարձ կապ: Անդրադարձ կատարվեց նախորդ նյութին՝ << Cinderella>>մաս 1-ին հեքիաթին: Խթանիչ հարցադրումների միջոցով, աշակերտները ներգրավվեցին դասապրոցեսին: Վեր հանվեց հեքիաթի ենթաշերտերում թաքնված միտքն ու այն արժեքը, թե ինչ են ուսուցանում մեզ հեքիաթները: Տրվեց ուղղորդող և նյութը ամրապնդող հարցեր, փակ հարցերին պատասխանում են ,,ցածր,, առաջադիմություն ունեցող աշակերտները: Մտքերի քարտեզագրում մեթոդով աշակերտները բնութագրեցին հեքիաթի հերոսին, կատարեցին նշումներ տետրերում: Օգտագործելով նախորոք պատրաստված ցուցապաստառը, ներկայացվեց անգլերենում ապառնի ժամանակաձևի կազմությունը՝ նրա պատմողական, հարցական և ժխտական ձևերի կազմությունը: Ապահովվեց հետադարձ կապ՝ աշակերտ-ուսուցիչ-աշակերտ: Աշակերտներին հանձնարարվեց ցուցապաստառին գրված նախադասություններից, գտնել և ընդգծել բայերը: Ես հետևում էի կատարվող աշխատանքներին,տալիս էի էվրիստիկ բնույթի հարցեր, որպեսզի սովորողն ինքը գտնի այն սխալը, որն ինքն է արել և շտկի թերությունները: Այնուհետև սովորողներին բաժանեցի չորս խմբի, բաժանեցի քարտերը, տվեցի պարզ և հստակ հրահանգ, որպեսզի տրված առաջադրանքների պահանջները լինեն հնարավորինս ըմբռնելի: Հետևեցի կատարվող աշխատանքներին, տրամադրեցի անհրաժեշտության դեպքում առաջ մղող անհատական բանավոր և գրավոր հետադարձ կապ: Քննարկվեց կատարված աշխատանքները, վերլուծեցինք և վեր հանեցինք անհասկանալի հատվածները: Ուսումնական բարձր և ցածր առաջադիմության տեր աշակերտները համագործակցում էին միմյանց հետ, աշխատում էին հանգիստ և հնարավորինս իրենց օգնությունն էին առաջարկում միմյանց: Իմ նախանշած երեք աշակերտներից յուրաքանչյուրը ընդգրկված էին խմբերից մեկում և աշխատում էին համագործակցային ուսումնառության պայմաններում:

Նրանք նյութը լավ էին ըմբռնել, ինչն էլ նրանց մոտ ստեղծել էր մոտիվացիա ներգրավվելու խմբի աշխատանքի մեջ, հնարավորինս ճիշտ կատարելու և ժամանակին ավարտելու նպատակով: Խմբի յուրաքանչյուր անդամ ունեցավ իր մասնակցությունը աշխատանքները բանավոր ներկայացնելիս: Ներկայացվող աշխատանքները լսելուց հետո , կատարվեց նշումներ, հնչեցվեց մտքեր, տրվեց հարցեր, կատարվեց վերլուծություն:

Կատարվեց պատճառաբանված և թափանցիկ գնահատում, խրախուսում:

Այնուհետև հանձնարարվեց տնային աշխատանք:

3.Փորձարարական դաս-**2**

4. Վերլուծություն

Հետազոտական դասի թեման էր "Cinderella " մաս 2 :

Դասի նպատակն էր

- բանավոր խոսքի զարգացում
- նոր բառապաշարի յուրացում
- կարդալ,թարգմանելու հմտությունների զարգացում
- հարցերին պատասխանելու կարողությունների զարգացում
- համեմատություն կատարելու հմտությունների ձևավորում
- ստեղծագործական մտածելակերպի զարգացում
- քննադատողական մտածելակերպի զարգացում
- բերականական գիտելիքների զարգացում
- առաջադիմության խթանում

Այս նպատակների հետ մեկտեղ ցանկանում էի առաջադիմության բարձրացում ունենալ այն աշակերտների մոտ,որոնց հետազոտում էի: Դասը սկսեցի հաճախումների և տնային առաջադրանքների ստուգումով: Այնուհետև ցուցապաստառը ներկայացնելուց հետո , մտագրոհ մեթոդի միջոցով ներկայացրեցի նոր

նյութը՝ Մոխրոտիկը հեքիաթի 2-րդ մասը, որով էլ ներգրավվեցի աշակերտին ուսուցման գործընթացում : Կատարեցինք բառային աշխատանք: Կարդացի և սովորողներն իրենք փորձեցին թարգմանել նոր նյութը: Այնուհետև դասարանը բաժանեցի 3 խմբերի, որոնցից յուրաքանչյուրում ներգրավվեցի հետազոտելի աշակերտներին: Նախորոք պատրաստված խմբային քարտերին հեքիաթը բաժանված էր 3 մասի: Աշակերտները պետք է կարդային և իրար բացատրեին իրենց հասանելիք հատվածը և բանավոր կարողանային ներկայացնել:

Իմ ուշադրության կենտրոնում էի պահել հիմնականում միջին և ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներին, որն էլ պատճառ հանդիսացավ նրանց ներգրավվածությանը դասապրոցեսին, նրանց հնարավորություն տրվեց ձեռք բերել խմբում աշխատելու հմտություն: Կիրառելով ակտիվ համագործակցային ուսուցման մեթոդներ, հասա վերոնշյալ աշակերտների դասին ակտիվ մասնակցությանը և ավելի բարձր առաջադիմության ցուցանիշի: Թիմային աշխատանքը դուր էր գալիս երեխաներին, նրանք պատրաստակամ էին օգնելու միմյանց, փորձում էին խոսել, բացատրել նյութը անգլերենով, իրենց տարիքային խմբին համապատասխան բառապաշարով, ես հետևում էի հեռվից:

Կատրված աշխատանքները ներկայացվեցին, տրվեցին հարցեր զուգահեռ խմբերի անդամների կողմից:

Գրատախտակին գրված նոր բառաշարքից, գծապատկերի միջոցով միացրեցին իրար հականիշ իմաստ ունեցող բառերը, ինչն առավել լավ տպավորվեց նրանց մոտ, նաև զարգացրեց բանավոր խոսքը: Դասն անցավ անկաշկանդ և հանգիստ մթնոլորտում, իմ նախանշած աշակերտների աչքերը փայլում էին ուրախությունից, քանի որ նրանք ունեցան պիտանի լինելու զգացողություն, այն որ իրենց թեկուզ մի փոքրիկ ներդրումը դրականորեն ազդեց աշխատանքի արդյունքի վրա և իրենց շնորհիվ իրենց թիմերը ստացան միավորներ:

Խմբերի աշխատանքները գնահատվեցին և խրախուսանքի արժանացան, առավել մեծ ուշադրություն և խրախուսանքի արժանացրեցի վերը նշված երեք աշակերտին և հորդորեցի, որ հաջորդ աշխատանքներում առավել մեծ մասնակցության հնարավորություն ունենալու համար պետք է իրենք ևս լինեն աշխատասեր և կատարեն ուսուցչի կողմից տրված հանձնարարությունները: Աշակերտները խոստովանեցին, որ բանավոր տրամադրված հետադարձ կապը ավելի արդյունավետ է:

Տնային աշխատանք հանձնարարեցի դիտել <<Մոխրոտիկը>> մուլտֆիլմը անգլերեն լեզվով, ուշադրություն դարձնելով բառերի ճիշտ արտասանության վրա:

Եզրակացություն

Վերլուծելով հետազոտական դասերի արդյունքները, եկա այն եզրակացության, որ ներգրավվածության բարձրացումը պայմանավորված է հետևյալ գործոններով.

- ✔ տարաբնույթ տարբերակված վարժություններին կատարում տարբեր առաջադիմություն ունեցող աշակերտների համար,
- ✔ հարցադրումներ և տարբերակված ուսուցում մեթոդների կիրառում դասաժամերին,
- ✔ գրավոր և բանավոր հետադարձ կապի տրամադրում,
- ✔ տարբերակված թեստային առաջադրանքների լուծում և ինքնարկում,
- ✔ թեմայի հիշեցում, ամրապնդում և ամփոփում՝ անհատական գրավոր աշխատանքների միջոցով:

Օտար լեզվով հաղորդակցվելու կարողությունը օգնում է աշակերտին հաջողություններին հասնել ոչ միայն ուսման մեջ, այլև հետագայում՝ կյանքի և աշխատանքային տարբեր իրադրություններում: Ուստի անհրաժեշտ է մեծ պատասխանատվությամբ վերաբերվել բանավոր խոսքի դասավանդմանը և սովորողների համար ստեղծել կենդանի, աշխույժ զրույցի, հաղորդակցման, համագործակցային իրավիճակներ, որոնք կապահովեն ակտիվ և հետաքրքիր դաս: Որպեսզի սովորողներն առավելագույն օգուտ ստանան դասից և ավելի ազատ հաղորդակցվեն միմյանց հետ, անհրաժեշտ է նրանց մեջ սերմանել դրական վերաբերմունք լեզվի նկատմամբ, նվազագույնի հասցնելով նրանց վախերն ու բարդույթները և ամեն կերպ բաջալերել աշակերտների միջև հաղորդակցությունն ու համագործակցությունը:

Յուրաքանչյուր աշակերտի խնդրին ծանոթ լինելով,նրա հետ համագործակցելով , աշակերտին աջակցելով և դասապրոցեսում օգնություն ցուցաբերելով կարելի է հասնել թեկուզ նվազագույն, բայց դրական արդյունքի:

Գրականության ցանկ

1. Աբրահամյան Ս.Գ. , Աշակերտի խոսքի զարգացումը, Երևան, 1987, 259 էջ:

2.Բաբանսկի Յու. Կ. , Մանկավարժություն, մաս 2, Երևան, 1987, 398 էջ:

3.Բրուտյան Գ. Ա., Ձևական տրամաբանության դասընթաց, Երևան, 1967, 44 էջ։

4. Այվազյան Է.Յ., Մանկավարժություն և մեթոդիկա, Երևան, 2005,58 էջ:

5. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020, 76 էջ։

6. Հարությունյան Թ., Կարապետյան Հ. , Ենգիբարյան Ա., Հոգեբանական խաղեր և վարժություններ: Ձեռնարկ մանկավարժների, դաստիարակների,հոգեբանների համար, Երևան, 2014, 564 էջ։

8. Մանուկյան Ա. Մ., Խոսքի զարգացման մեթոդիկա, Երևան, 1976, 347 էջ։

9.<<Անգլերեն լեզու>> հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր: Երևան, 2007:

10.Blaz D. Foreign Language Teacher's Guide to Active Learning. New York: Eye on Education, 1999.

11. Cook G. Translation in Language Teaching. Oxford: Oxford University Press, 2010.

12. Mukalel J.C. Approaches to English Language Teaching. New Delhi: Discovery
Publishing House, 2005.

5. Nagaraj G. English Language Teaching: Approaches, Methods, Techniques.
India: Orient Blackswan, 1996.

6.Հավելված

Դասապլան**-1**

Առարկա՝	Անգլերեն	Ամսաթիվ	**15.04.2022**	Կիսամյակ	**II**	Դասարան	IV
Թեմա՝	‹‹Simple Future Tense››.						
Օգտագործվող նյութեր՝	Գրատախտակ,ցուցապաստառ, դասագիրք, տետրեր, քարտեր, բառարան, նկար **“Մոխրոտիկը”**, ցուցապաստառ ***“Simple Future Tense”***, թեմային վերաբերվող այլ դիդակտիկ պարագաներ:						
Դասի նպատակը՝	✔ Իմանալ հայերենում բայի ապառնի ժամանակաձևի կազմությունը , ✔ Ընբռնել բայի ապառնի ժամանակաձևի կազմությունը անգլերենում, ✔ Յուրացնել անգլերենում ապառնի ժամանակաձևի հարցական և ժխտական ձևերի կազմությունը, ✔ Կարողանալ հիշել նոր ձեռք բերված գիտելիքը, համադրել այն արդեն ունեցած գիտելիքների հետ և կիրառել այն առօրյայում՝ և՛ բանավոր, և՛ գրավոր խոսքում:						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունք-ները	Աշակերտները կկարողանան. ✔ Դասանյութի նոր բառաբարքում տրված բառերից, կազմել նախադասություններ,ապառնի ժամանակաձևով, ✔ Ըստ ենթակայի ճիշտ օգտագործել **shall** կամ **will** բառերը, ✔ Դուրս բերել տեքստից ապառնի ժամանակաձևով կազված նախադասությունները, ✔ Կազմել վերը նշված նախադասությունների հարցական և ժխտական ձևերը:						

Գործողություններ(ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ ներ

5բոպե-սկիզբ 10 բոպե Ընթացք	Բացել դասագրքերը, պատրաստվել դասին: Ներկայացնել տնային աշխատանքները: Անդրադարձ կատարել նախորդ նյութին՝ **“Cinderella”**(մաս 1-ին)հեքիաթին: Պատասխանել հարցերին Փոխադարձ հարցեր տալ, փակ հարցերին պատասխանում են ,,ցածր,, առաջադիմություն ունեցող աշակերտները: Մտքերի քարտեզագրում մեթոդով աշակերտները բնութագրում են հեքիաթի հերոսին, կատարում նշումներ տետրերում: Ե՛վ ուսումնական բարձր առաջադիմության տեր աշակերտները, և՛	Ողջունել դասարանին, կատարել հաճախումների հաշվառում: Ստուգել տնային աշխատանքները, բացատրել, եթե կան անհասկանալի հատվածներ կամ սխալ կատարված աշխատանքներ: Խթանիչ հարցադրումների միջոցով, աշակերտներին ներգրավվել դասապրոցեսին: Վեր հանել հեքիաթի ենթաշերտերում թաքնված միտքն ու այն արժեքը, թե ինչ են ուսուցանում մեզ հեքիաթները: Տալ ուղղորդող և նյութը ամրապնդող հարցեր: Օգտագործելով նախորոք պատրաստված ցուցապաստառը, ներկայացնել անգլերենում	✔ Ի՞նչ հեքիա-թա գիր-ներ գիտեք: ✔ Ի՞նչ են ուսուցա-նում մեզ հեքիաթ ները: ✔ Ինչպի-սի՞ն էր մոխրո-տի կը բնավո րությամբ: ✔ Ինչպի ✔ սի՞ ն էր մոխրո-տի կի արտա-քին տեսքը: ✔ Կարելի է՞ մարդու մասին կարծիք կազմել նրա հագ ու կապից: ✔ <<Մարդու ն հագուստով	Մտագրոհի մեթոդ Մտքերի քարտեզագրում մեթոդ

10բոպե **17** բոպե	ցածր առաջադիմություն ունեցողները կազմում են խմբեր և համագործակցում միմյանց հետ, աշխատանքը հնարավորինս ճիշտ կատարելու և ժամանակին ավարտելու նպատակով: Ուշադիր լսել խմբերի խոսնակների կողմից ներկայացվող աշխատանքները, կատարել նշումներ, հնչեցնել մտքեր, հարցեր, կատարել վերլուծություն: Աշխատանք դասագրքի հետ:	ապառնի ժամանակաձևի կազմությունը՝ նրա պատմողական, հարցական և ժխտական ձևերի կազմությունը: Ապահովել հետադարձ կապ՝ աշակերտ-ուսուցիչ-աշակերտ: Սովորողներից **3** աշակերտի հանձնարարել ցուցապաստառներին նախորոք գրված նախադասություններից,գտնել և ընդգծել բայերը: Հետևել կատարվող աշխատանքներին,տալ էվրիստիկ բնույթի հարցեր, որպեսզի սովորողն ինքը գտնի այն սխալը, որն ինքն է արել և շտկի թերությունները: Սովորողներին բաժանել **4** խմբի	ընդունում ենք, խելքով՝ ճանապարհում>> ի՞նչ կասեք այս խոսքերի մասին: *1.*Ինչպիսի՞ գործողություն է է ցույց տալիս ապառնի ժամանակաձևը հայերենում: 2.Ինչպե՞ս է արտահայտվում այդ ժամանակաձևը հայերենում: 3.Որո՞նք են անգլերենում ապառնի ժամանակաձևը կազմող բայերը:	Համագործակցային ուսուցման՝ <<Աշակերտների թիմային առաջադիմություն >>մեթոդ Հարց ու պատասխանի մեթոդ

		Բաժանել բարտերը, տալ պարզ և հստակ հրահանգ, որպեսզի տրված առաջադրանքների պահանջները լինեն հնարավորինս ըմբռնելի: Հետևել կատարվող աշխատանքներին, տրամադրել անհրաժեշտության դեպքում առաջ մղող անհատական բանավոր, գրավոր հետադարձ կապ: Կատարված աշխատանքները քննարկել, վերլուծել և վեր հանել անհասկանալի հատվածները , եթե կան այդպիսի: Բանավոր հետադարձ կապի տրամադրում, անհասկանալի հատվածների բացատրություն: Տնային աշխատանքի հանձնարարում: Կատարել պատճառաբանված և թափանցիկ գնահատում, խրախուսում:	4.Նախադասությունը ի՞նչ շարահյուսական ձևափոխության է ենթարկվում հարցականի կազմության դեպքում և ի՞նչ կետադրական նշան է օգտագործվում: 6.Ինչպե՞ս է կազմվում ապառնի ժամանակի ժխտական ձևը: Խմբային բարտերում զետեղված առաջադրանքները կներկայացնեմ դասապլանի վերջում, որոնք 4 տարբերակով են:	Երեք բանալի մեկ կողպեք

3բոպե-ավարտ				
Տնային աշխատանք	էջ 40 վարժ. 4:			

Խումբ **1**

Underline the sentences in Simple Future Tense.

(Ընդգծել ապառնի ժամանակաձևով տրված նախադասությունները)

Hanry will send a letter to his friend.
I shall call the doctor, I have a high temperature.
He is going on foot.
Mr. Bean says, he likes children very much.

Խումբ **2**

Check the right form.(Ընտրել ճիշտ ժամանակաձևը)

They **visit/ will visit** us next Sunday.

Meena (**will be / became**) a doctor. She (**will treat / treats**) people who are sick.

Sharan (**sings /sang**) many beautiful songs. He (**will be / is wanting to be**) a singer.

I (**will take / took**) my sister to the park tomorrow evry day.

Խումբ **3**

Rewrite the given sentences in interrogative form.

(Տրված նախադասությունները դարձնել հարցական)

I will give Jyothi a nice gift on her birthday.

She will take the exam at the end of the month.

They will buy a car next month.

Դասապլան-**2**

Առարկա՝	Անգլերեն	Ամսաթիվ	**22.04.2022**	Կիսամյակ	**II**	Դասարան	IV
Թեմա՝	‹‹Cinderella›› մաս 2						
Օգտագործվող նյութեր՝	Գրատախտակ,ցուցապաստառ, դասագիրք, գրենական պիտույքներ, քարտեր, բառարան, ցուցապաստառ “Մոխրոտիկը”, թեմային վերաբերվող այլ դիդակտիկ պարագաներ:						
Դասի նպատակը՝	❖ բանավոր խոսքի զարգացում ❖ նոր բառապաշարի յուրացում ❖ կարդալ,թարգմանելու հմտությունների զարգացում ❖ հարցերին պատասխանելու կարողությունների զարգացում ❖ համեմատություն կատարելու հմտությունների ձևավորում ❖ ստեղծագործական մտածելակերպի զարգացում ❖ քննադատողական մտածելակերպի զարգացում ❖ բերականական գիտելիքների զարգացում ❖ առաջադիմության խթանում						

	Ուսուցանման արդյունքներ, որոնք կվաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ
Վերջնարդյունքները	Աշակերտները կկարողանան. ✔ Հիշել բառի իմաստը և նոր դասանյութի բառաշարքի ածականներից գտնել հակառակ իմաստն ունեցող բառերը ✔ Կարդալ տեքստը, հասկանալ թարգմանությունն ու իմաստը ✔ Կիրառել նոր բառապաշարը նյութը բանավոր ներկայացնելիս ✔ Կարողանալ վերարտադրել կարդացածը ✔ Համագործակցել խմբակիցների հետ համագործակցային աշխատանք կատարելիս

Գործողություններ(ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ (ներ)
5րոպե-սկիզբ	Բացել դասագրքերը, պատրաստվել դասին: Ներկայացնել տնային աշխատանքները: Անդրադարձ կատարել նախորդ նյութին՝ **Simple Future Tense:**	Ողջունել դասարանին, կատարել հաճախումների հաշվառում: Ստուգել տնային աշխատանքները, բացատրել, եթե կան անհասկանալի հատվածներ կամ սխալ կատարված աշխատանքներ:		Հարց ու պատասխանի մեթոդ
15րոպե-ընթացք	Պատասխանել հարցերին: Փոխադարձ հարցեր տալ:	Օգտագործելով <<Մոխրոտիկը>>ցուցապատու

, ներկայացնել նոր նյութը՝ <<Cinderella >> մաս 2-րդ: Ներկայացնել նոր բառապաշարը: | 1.Ի՞նչ հեքիաթագիր-ներ գիտեք: | Պոպ Կորեյի մեթոդ |

5-րոպե	Աշխատել բառատետրերում: Պարզ նախադասություններով պատասխանում են ,,ցածր,, առաջադիմություն ունեցող աշակերտները, իսկ ավելի ծավալուն մտքեր արտահայտում են միջին և բարձր առաջադիմություն ունեցող սովորողները: Արտահայտել կարծիքներ հեքիաթի հերոսների վարքագծի և վարվեցողության կանոնների մասին և փորձել համեմատություն անցկացնել իրենց և հերոսների բնավորության գծերի միջև:	Հեքիաթը կարդալ, շեշտը դնելով բառերի ճիշտ հնչերանգի վրա: Ապահովել հետադարձ կապ՝ աշակերտ-ուսուցիչ-աշակերտ Խթանիչ հարցադրումների միջոցով, աշակերտներին ներգրավվել դասապրոցեսին: Ստեղծել այնիպիսի միջավայր, որպեսզի սովորողները կարողանան արտահայտել իրենց մտքերը և խոսեն անկաշկանդ, սխալների ուղղումը կատարել քննարկումից հետո , նրբանկատորեն: Տալ նյութը ամրապնդող հարցեր: :	2.Ի՞նչ են ուսուցանում մեզ հեքիաթները: 3.Ինչ պիսի՞ բառերով կբնութագրեք Մոխրոտիկին: 4.Ինչ՞ սովորեցիք մոխրոտիկից : 5.Եթե դուք լինեիք Մոխրոտիկի փոխարեն , ինչպե՞ս կվարվեիք խորթ մոր և քույրերի հետ: 7.Ի՞նչ եք կարծում , եթե մոխրոտիկի խորթ քույրերը լինեին նրա հրազատ քույրերը ,նրանք կվարվե՞ն Մոխրոտիկի հետ նույն կերպ: 8.Ի՞նչ եք կարծում արքայազնը միայն Մոխրոտի արտաքին տեսքն էր հավանել, թե նա հասկացել էր, որ Մոխրոտը	Մտագրոհի մեթոդ

			բնավորությամբ էլ էր գեղեցիկ: 9.Մոխրոտիկն ու արքայազնը երջանիկ էի՞ն:	
17 բոպե	Աշակերտները կազմում են խմբեր, այնպես, որ յուրաքանչյուր խմբում ներկայացված լինեն ուսումնական առաջադիմություն ունեցող երեք աստիճանները ներկայացնող սովորողներ: Խմբի անդամները համագործակցում, աշխատանքի բաժանում են կատարում իրար միջև բարի –դրացիական մթնոլորտում, միմյանց փոխօգնության սկզբունքով,	Սովորողներին բաժանել 3 խմբի Բաժանել քարտերը, բացատրել առաջադրանքի պահանջը հնարավորինս պարզ և հստակ, որպեսզի ամեն ինչ հասկանալի լինի սովորողներին: Հետևել կատարվող աշխատանքներին, ուղղորդել, օգնել, եթե կա դրա կարիքը: Ուշադրության կենտրոնում պահել հետազոտվող երեք աշակերտներին, պարզեցնել նրանց հասանելիք աշխատանքը: Բանավոր հետադարձ կապի տրամադրում.	Համագործակցա յին՝ <<Աշակերտների թիմային առաջադիմութ յուն>> մեթոդ

	առաջադրանքը հնարավորինս անսխալ կատարելու և ժամանակին ավարտելու նպատակով: Ուշադիր լսել խմբերի խոսնակների կողմից ներկայացվող աշխատանքները, կատարել նշումներ, հնչեցնել մտքեր, հարցեր, կատարել վերլուծություն: Աշխատանք գրատախտակին :	Կատարված աշխատանքները քննարկել, վերլուծել և վեր հանել անհասկանալի հատվածները , եթե կան այդպիսիք: Կատարել պատճառաբանված և թափանցիկ գնահատում, խրախուսում: Տնային աշխատանքի հանձնարարում:		

3րոպե–ավարտ				
Տնային աշխատանք	Վ.*13* ***True or false***(ճիշտ և սխալ)**:** Բացատրել հանձնարարել կատարել բանավոր**:**			